

ՄԻ ԴՐՎԱԳ ՍԼԵՀ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ ԵՎ ՌՈՒԲԵՆ Բ-Ի
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ շատ հետաքրքիր և կարևոր է Սլեհ իշխանապետի ժամանակաշրջանը, քանզի վերջինս, ի տարբերություն այլ իշխանների, որդեգրել է միանգամայն նոր քաղաքականություն, որի առանձին դրվագները մինչև այժմ էլ պարզաբանման կարիք ունեն։ Դրանց մեջ չափազանց կարևորում ենք Սլեհի և եղբորորդու՝ Ռուբեն Բ-ի հարաբերությունները, որի մի շարք մանրամասներ մինչև այժմ էլ պատմագիտական գրականության մեջ բավարար չափով չեն ուսումնասիրվել։ Մեր ներկա հետազոտության նպատակը այդ բացը լրացնելն է։

1168 թ. շրջադարձային իրադարձություններ տեղի ունեցան Կիլիկիայի հայոց իշխանապետությունում։ Կիլիկիայի իշխանապետ Թորոս Բ-ն որոշեց իշխանությունը հանձնել իր մանկահասակ որդուն՝ Ռուբենին, իսկ ինքը թողեց քաղաքական ասպարեզը և մտավ վանք, որտեղ էլ կարճ ժամանակ անց կնքեց մահկանացուն¹։ Մինչև որդու չափահաս դառնալը խնամակալ նշանակվեց Թովմասը, որը Թորոսի ազգականներից էր։

Փաստորեն, Կիլիկյան Հայաստանում առաջին անգամ հանդիպում ենք խնամակալության ինստիտուտի երևույթին։ Շուտով հայոց իշխանապետի մահվան և Կիլիկիայում տեղի ունեցող անցուդարձերի մասին տեղեկանում է Սլեհը։ Գիտակցելով, որ եկել է իր նպատակին հասնելու ամենահարմար պահը, որոշում է անցնել վճռական գործողությունների։ Միգուցե նրա փաստարկն այն էր, որ ինքը ազգակցական կերպով ավելի մերձ է Ռուբենին, քան Թովմասը, հետևաբար ինքը պետք է դառնար իշխանագնի խնամակալն ու Կիլիկիայի ղեկավարը։ Բացի այդ, հայտնի է, որ Սլեհը տարիներ առաջ եղբոր հանդեպ անհաջող դավադրությունից հետո գրկվել էր ժառանգությունից, արտաքսվել Կիլիկյան Հայաստանի սահմաններից՝ ծառայության անցնելով Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի մոտ։

¹ Ըստ Բար Հեբրաուսի՝ Թորոս Բ-ն մահացել է 1168 թվականի դեկտեմբերին, տե՛ս Bar Habraeus, *The Chronography*, London, 1932, էջ 292։ Հետազոտող Յ. Տեր-Ղազարյանի համոզմամբ՝ Թորոս Բ իշխանապետը թաղվել է Դրազարկի վանքի մեջ, տե՛ս Յ. Տեր-Ղազարյան, Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, 1966, էջ 268։

Մամվել Անեցու երկը շարունակողներից մեկը, ինչպես նաև պատմիչ Բար Հեբրաուսը գրում են, որ Մլեհը դիմում է Հալեայի աթաբեկ Նուր ադ-Դինին, օգնական գործ ստանում և մտնում Կիլիկիա²: Մլեհ Ռուբինյանի գործողությունների մասին տեղեկացնում է նաև Սմբատ Սպարապետը, ով հավաստում է, որ Մլեհը ռազմական ուժի օգնությամբ կարողացավ գրավել իշխանությունը Կիլիկիայում և հարուստ պարզներով հասուցեց իրեն աջակցած թուրքական գործերին. «Ի թուին ՈՏԸ (618=1169) առնու Մլեհն եղբայրն Թորոսի օգնութիւն ի Նուրըտնէն, որ էր տէր Հալպայ, և բազում թուրքով եկն եմուտ յերկիրն Կիլիկեցոց և տիրապետեաց իշխանութեանն եղբօրն իւրոյ...»³: Հարց է ծագում, թե ինչու է Մլեհը Կիլիկիայի իշխանությունը զավթելիս օգտվել Հալեայի տիրակալի տրամադրած ռազմական ուժից: Չի բացատրվում, որ իշխանությունը գրավելը Կիլիկյան Հայաստանում հանգիստ չի ընթացել: Եվ եթե Մլեհը Կիլիկիա է ներխուժել գորքով, ապա պետք է ենթադրել, որ նա Կիլիկիայում բախվել է իշխող վերնախավի դիմադրությանը, որը նրան չէր ցանկանում տեսնել հայոց իշխանապետի աթոռին: Այդ է վկայում 13-18-րդ դարերի ժամանակագիրներից մեկը, որի խոսքով Մլեհի առաջին փորձը գրավելու Կիլիկիայի իշխանությունը անհաջող է անցել. «Եւ յորժամ լուաւ զմահ եղբարցն եկն յաշխարհն Կիլիկիոյ, աւգնակութեամբ սուլթանին Հալպա, կամեցաւ տիրել աշխարհին և ոչ կարաց, այլ դարձաւ անդրէն ի Հալպ...Եւ միւս անգամ դարձեալ խնդրեց ի սուլտանէն զաւրս բազումս: Եւ շարժեցաւ գալ ի վերայ քրիստոնէիցն աւերել զաշխարհն և աւգնականութեամբ անաւրինացն տիրել երկրին»⁴: Նմանատիպ տեղեկություն կա նաև Վահրամ Բաբունու աշխատության մեջ.

Յորժամ գեղբայրց՝ մահրն լուեալ,
 Ի սուլտանէն՝ հեծեալ առեալ.
 Եւ ի հայոց՝ երկիր մտեալ,
 Որոց բազում՝ չար հասուցեալ:
 Եւ զի տիրել՝ ոչ կարացեալ,
 Ապա ի Հալպայ՝ յետս դարձեալ,
 Եւ այլ բազում՝ զօր ժողովեալ,
 Կրկին անգամ՝ եղև եկեալ
 Առ որ Հայոց՝ իշխանքն յղեալ,
 Եւ զնա սիրով՝ պարոն կոչեալ⁵:

Փաստորեն, Վահրամ Բաբունու և ժամանակագիրներից մեկի տեղեկություններից պարզ է դառնում, որ իշխանությունը գրավելու Մլեհի

² Տե՛ս **Bar Habraeus**, նշվ. աշխ., էջ 292, **Մամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 135:

³ **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, Մոսկուա, 1856, էջ 88:

⁴ «Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի», կազմեց Վ. Հակոբյանը, հ. Բ, Եր., 1951, էջ 102:

⁵ **Վահրամ Բաբունի**, Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, էջ 210-211:

առաջին փորձը ավարտվում է անհաջող:

Այս առնչությամբ իրենց տեսակետներն են հայտնում նաև հետազոտողները: Մասնավորապես Ալիշանը, անդրադառնալով այս դեպքին, կարծիք է հայտնում, որ Մլեհը առաջին անգամ քիչ մարդկանցով եկավ Կիլիկիա՝ իշխանությունը վերցնելու. «...որ եղբորը մահը լսելուն մեկէն քիչ մարդով փութացաւ մտաւ ի Կիլիկիա, պարոնութիւնը առնուլ...»⁶: Հավանաբար նա կարծում էր, որ Կիլիկիայի իշխանները հաշվի կառնեն այն հանգամանքը, որ ինքը Ռուբենի ամենամերձավոր ազգականն է, և վերջինիս խնամակալությունը կհանձնեն իրեն, սակայն, ինչպես նշում է նույն հետազոտողը, «Հայք՝ որ արդէն զգուած էին իրմէ՝ դեմ կեցան օգնութեամբ Անտիոքայ իշխանին և Երուսաղէմի թագաւորին, ու վորնտեցին»⁷:

Փաստորեն, Ալիշանի դիտարկմամբ՝ Մլեհի դեմ պայքարում Կիլիկիայի իշխաններին օգնել են նաև արտաքին ուժերը, մասնավորապես Անտիոքի իշխանն ու Երուսաղէմի թագավորը: Կարծում ենք այդ տեսակետը կարող է մոտ լինել իրականությանը, և շատ հնարավոր է, որ այս հարցում Կիլիկիայի իշխաններին աջակցել են խաչակրաց պետությունների ղեկավարները, քանզի նրանց շահերից էլ չէր բխում Կիլիկյան Հայաստանի իշխանապետության աթոռին տեսնել Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի վստահելի մարդկանցից մեկին. նման պարագայում թե՛ Անտիոքի իշխանապետությունը և թե՛ Երուսաղէմի թագավորությունը կկորցնէին իրենց որոշակի ազդեցությունը Կիլիկիայի հայոց իշխանապետության նկատմամբ:

Արձանագրենք, որ Մլեհը, 1169 թվականին գալով Կիլիկիա, հաջողություն չի ունեցել և նահանջել է: Որոշ ժամանակ անց, օգնական զորքեր ստանալով Հալեպի աթաբեկից, կրկին ներխուժել է Կիլիկիա, ինչին հաջորդել են հաշտության բանակցությունները: Կարծում ենք, որ պետությունը ավերածություններից զերծ պահելու համար Կիլիկիայի հայ վերնախավը համաձայնության է եկել Մլեհի հետ՝ ճանաչելով նրան իշխանապետ այն պայմանով, որ նա կիսելու է իշխանությունը Ռուբեն Բ-ի հետ: Այդ մասին եզակի տեղեկություններ կան պատմիչ Միքայել Ասորու ժամանակագրության մեջ. «Յետ այսորիկ իշխանքն Հայոց և Թումաս մանկակալ տղայոյն, առին ի նմանէ (ի Մլեհէ) երդումն՝ զի մի զկես զէ զեղբորորդին իւր, և նոքա ասցէն նմա զկես երկրին և դարձցի անդրէն...»⁸:

Թեև մյուս պատմիչների աշխատանքներում չկա նման վկայություն, սակայն կարծում ենք, որ դա կարող է մոտ լինել իրականությանը, քանզի իշխանները չէին ցանկանա ամբողջ իշխանությունը տալ Մլեհին, քանի որ լավ էին գիտակցում, որ դառնալով Ռուբենի խնամակա-

⁶ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 324-325:

⁷ Նույն տեղում:

⁸ Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն հայոց, Երուսաղէմ, 1871, էջ 454:

լը՝ Մլեհը չի բավարարվի դրանով և կարճ ժամանակ անց կլիլի ողջ իշխանությունը: Բացի այդ, Կիլիկիայի վերնախավը գուցե դիմեց նման քայլի՝ հաշվի առնելով տարբեր պատճառներ, որոնցից մի քանիսին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ:

1. Հայկական պետության վերնախավը չէր ցանկանում, որ Մլեհը Հալեպի տիրակալի օգնական գնդերով մտնի Կիլիկյան Հայաստան, քանի որ կարող էր մեծ ավերածություններ գործել:

2. Հնարավոր է, որ Կիլիկիայի իշխանների մի մասը ցանկացել է Կիլիկիայի իշխանապետության աթոռին տեսնել Մլեհին, որպեսզի հայկական պետությունը ուժեղանա, մանավանդ այն պայմաններում, երբ իրավիճակը տարածաշրջանում այդքան էլ հանգիստ չէր, և Կիլիկիան կանգնած էր արտաքին մի շարք մարտահրավերների առաջ: Իսկ նրա իշխանության գալով հայոց պետությունը նախևառաջ կունենար ուժեղ և խելացի ղեկավար, իսկ մյուս կողմից էլ՝ հզոր դաշնակից՝ ի դեմս Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի: Այդ է վկայում նաև Ա. Բոզոյանի այն տեսակետը, համաձայն որի՝ 1170 թվականին բյուզանդական վերջին մնացորդները մաքրելու նպատակով Կիլիկիայում տեղի ունեցավ հեղաշրջում⁹:

Փաստորեն, առաջին անգամ Կիլիկյան Հայաստանի կառավարման համակարգում հանդիպում ենք երկիշխանության: Մլեհը Կիլիկիայի իշխանների առաջ երդվեց, որ մյուս կեսը մնալու է մանուկ ժառանգին: Այստեղ հարց է ծագում, թե արդյոք հայ իշխանների որոշումը ձեռնտու էր բոլոր կողմերին: Դժվար է հստակ գնահատական տալը, բայց կարծում ենք, որ այդ պահին առավել շահեկան վիճակում էր Մլեհը, քանի որ իր եղբորորդին անչափահաս էր և դեռ երկար տարիներ չէր կարողանալու ղեկավարել Կիլիկյան Հայաստանը:

Ամեն դեպքում փաստ է, որ սկսած 1170 թվականից՝ Մլեհը կառավարեց Կիլիկիայում և վարեց ներքին և արտաքին բավական ակտիվ քաղաքականություն: Եվ իր ծրագրերի մեջ ոչ մի կերպ չէր մտնում իշխանությունը Ռուբեն Բ-ի հետ կիսելը: Կարճ ժամանակ անց Մլեհը դրժեց իր խոստումը և ամբողջ իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Իրավիճակը այնքան բարդացավ, որ Ռուբենը և իր խնամակալը ստիպված լքեցին Կիլիկիայի սահմանները, Թովմասը հեռացավ Անտիոք, իսկ Ռուբենը՝ Հռոմկլա: Թե ինչու Թովմաս պայլը Ռուբեն Բ-ին իր հետ չպահեց Անտիոքում, որը հավանաբար առավել անվտանգ վայր կարող էր լինել Թորոս Բ-ի որդու համար, կարելի է ենթադրել: Անտիոքի վերնախավը հավանաբար չի ցանկացել բարդացնել իր հարաբերությունները Կիլիկյան Հայաստանի և Հալեպի աթաբեկության հետ և դրա համար էլ վերջինիս տեղափոխել են Հռոմկլա:

Փաստորեն, նման վարքագծով Թովմաս պայլը հրաժարվել է Ռու-

⁹ Տե՛ս Ա. Բոզոյան, Կիլիկիայի հայկական պետությունը իշխանապետությունից թագավորություն, «Էջմիածին» ամսագիր, 2006, ԺԲ, էջ 88:

բեն Բ-ի նկատմամբ խնամակալությունից՝ վերջինիս թողնելով բախտի քմահաճույքին:

Հռոմկլայում մի որոշ ժամանակ մնալուց հետո Ռուբեն Բ-ին գտնում են մահացած, ինչը շատ կասկածելի է: Հարց է ծագում, թե ինչու Ռուբենին ուղարկեցին հենց Հռոմկլա: Մի կողմից բերդաքաղաքը հայոց հայրապետի նստավայրն էր և բավական անվտանգ վայր կարող էր լինել Ռուբենի համար, բայց մյուս կողմից էլ այդ տարածքը Հալեպի աթաբեկության տիրապետության տակ էր, և Մլեհին հեշտ կլինէր հասնել Ռուբենին:

Ռուբենը դժվար թե մահացած լինէր իր բնական մահով: Իսկ ո՞ւմ էր այդ պահին առավել ձեռնտու ասպարեզից հեռացնել Թորոս Բ-ի որդուն: Ընդհանրապես այս միջադեպի վերաբերյալ կան տարբեր տեղեկություններ և թե՛ միջնադարյան պատմիչների երկերում և թե՛ կարծիքներ գիտական գրականության մեջ: Պատմիչներից առաջինն արձագանքել է Սմբատ Սպարապետը՝ նշելով, որ Ռուբենը Հռոմկլայում մահացավ. «Եւ զտղայն Թորոսի առաքեցին ի հայրապետական այթոռն Հռոմկլայն առ կաթողիկոսն, և անդ մեռաւ...»¹⁰:

Սմբատը Ռուբենի մահվան մասին որևէ մեկնաբանություն չի տալիս: Վահրամ Բաբունին նշում է, որ վերջինս սպանվել է ամբարիշտ մարդկանց ձեռքով.

Սակայն Թումաս՝ ըն փախուցեալ,
Ի յԱնտիոք՝ ուստի եկեալ.
Եւ զԹորոսի՝ որդին առեալ,
Ամբարշտաց՝ և սպանեալ¹¹:

Թեև Վահրամ Բաբունին չի նշում պատանու Հռոմկլա գնալու մասին, սակայն կարևորն այն է, որ պատմիչը նույնպես արձանագրում է, որ Ռուբեն Բ-ն սպանվել է ամբարիշտ մարդկանց ձեռքով:

Ռուբենի սպանված լինելու վարկածին համամիտ է նաև Ալիշանը. «...և գորդի Թորոսի ամբարիշտք ոմանք կալեալ սպանին»¹²: Վերոնշյալ ինդրի մասին որոշակի վկայություններ կան նաև 13-18-րդ դարերի ժամանակագիրներից մեկի գործում, որը նույնպես հաստատում է, որ Թորոսի որդին սպանվեց ամբարիշտ մարդկանց կողմից. «... և զԹորոսի որդին կալան ամբարիշտ ոմանք և սպանին»¹³, ինչպես նաև Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկի մոտ. «...և գորդի Թորոսի ամբարիշտք ոմանք կալեալ սպանին»¹⁴:

Փաստորեն, պատմիչների ճնշող մասը վստահ է, որ Ռուբեն Բ-ն չի մահացել բնական մահով, այլ սպանվել է: Այժմ տեսնենք, թե ինչպիսի

¹⁰ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 190:

¹¹ Վահրամ Բաբունի, նշվ. աշխ., էջ 211:

¹² Ղևոնդ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 347:

¹³ «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 103:

¹⁴ Սամվել Անեցի, նշվ. աշխ., էջ 218:

կարծիքներ կան մասնագիտական գրականության մեջ:

Մ. Զուլայանը¹⁵, Գ. Միքայելյանը¹⁶ և Ստեպանենկոն¹⁷ և Վ. Տեր-Ղևոնդյանը¹⁸ նշում են, որ Ռուբենը Հռոմկլայում մահացավ՝ չմանրամասնելով թե ինչպես: Ի տարբերություն վերը նշված հեղինակների՝ Կ. Մուրաֆյանը և Ս. Տեր-Ներսիսյանը¹⁹, անդրադառնալով Ռուբենի մահվան հանգամանքներին, նշում են, որ նրան սպանել են Մլեհի կողմնակիցները²⁰, սակայն այլ մանրամասներ չեն հաղորդում: Նրանց հետ համամիտ են նաև Յ. Տեր-Ղազարյանն²¹ ու Ս. Պապիկյանը²², որոնք նաև ավելացնում են, որ Ռուբենին թունավորել են: Իսկ ահա Օրմանյանը նախ նշում է, որ Ռուբենը Հռոմկլայում մահացավ և մի քանի տող ներքև էլ զարմանք է ապրում, թե ինչպես կարող էին չարագործները կատարել այդ ոճիրը մի անձնավորության նկատմամբ, որը գտնվում էր կայթողիկոս Ներսես Շնորհալու պաշտպանության ներքո²³:

Առավել հավանական ենք համարում, որ Ռուբեն Բ-ն չի մահացել բնական մահով, այլ սպանվել է: Իսկ այն ձեռնադր էր արաջին հերթին Մլեհին, քանզի նա կարող էր մտավախություն ունենալ, որ Ռուբենը, չափահաս դառնալով, կարող էր վերադառնալ Կիլիկիա և պահանջել իշխանությունը: Այս քայլով Մլեհը փորձում էր վերացնել ապագայում Կիլիկիայի գահի օրինական հավակնորդին:

Փաստորեն, Ռուբեն Բ-ի սպանությամբ Մլեհը Կիլիկյան Հայաստանում դարձավ միանձնյա կառավարիչ:

Բանալի բառեր – Մլեհ, իշխան, Կիլիկիա, Ռուբեն, հարաբերություններ, պետություն, զորք, պատմություն, քաղաքական, պայմանագիր, պատմիչ

АРАМ ОГАННИСЯН – Один эпизод из истории взаимоотношений князя Млеха и Рубена II. – Статья посвящена одному из самых интересных периодов в истории Киликийской Армении – второй половине XII в. В работе на основе сведений, приведённых средневековыми историками, и с учётом современной научной литературы подробно изложены перипетии взаимоотношений Млеха Рубиняна и его племянника Рубена II. В статье выделены некоторые подробности прихода Млеха к власти, особенно соглашение, подписанное им и политической элитой Киликийской Армении. Отражены также процесс захвата Млехом власти, совер-

¹⁵ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ակադեմիական հրատարակություն, հ. 3, Եր., 1976, էջ 683:

¹⁶ Տե՛ս Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայոց պետության պատմություն, Եր., 2007, էջ 129:

¹⁷ Տե՛ս Բ. Степаненко, Киликийский вопрос в международных отношениях в 50-70-х годах XII в., Византийский временник, Москва, 1991, т. 52, էջ 131:

¹⁸ Տե՛ս Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Եր., 1994, էջ 62:

¹⁹ Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Եր., 2005, էջ 393:

²⁰ Տե՛ս Կ. Մուրաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001, էջ 395:

²¹ Տե՛ս Յ. Տեր-Ղազարյան, նշվ. աշխ., էջ 171:

²² Տե՛ս Ս. Պապիկյան, Հայերը և խաչակիրները, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1965, էջ 272:

²³ Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյուն, 1660:

шенные им насилия и та ситуация, которая вследствие этого сложилась в Киликийском государстве. Наконец, в статье рассмотрены обстоятельства побега Рубена II и его опекуна Товмаса, а также подробности убийства Рубена II, к которому, как показано в исследовании, причастен его дядя князь Млех.

Ключевые слова: *Млех, князь, Киликия, Рубен, взаимоотношения, государство, война, история, политический, соглашения, историк*

ARAM HOVHANNISYAN – *An Extract from the History of Relationships Between Mleh Prince and Ruben B.* – The article considers the most important period of Cilician Armenia, namely the second half of XII century. Based on the facts left by both medieval historians and contemporary scientific researchers, the article represents details of the relationships between Mleh and Ruben B. The article also contains the details of how Mleh came to power and to the fact how he completely took over the violence realized on the way to power and the situation arranged in Armenian Cilicia. At the end of the article, we have thoroughly considered the circumstances of the escape of Ruben B and the protector Thovmas as well as the evidence that the killing of Ruben B was organized by Prince Mleh.

Key Words: *Mleh, prince, Cilicia, Rouben, relations, state, troops, history, political, contract, historian*